ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՎԱՔ ԺՆԵՎՈՒՄ

Մայիսի 19-22-ը Ժնևում՝ Բոսեի էկումենիկ դպրոցում, տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի էկումենիկ պաշտոնյաների հանդիպումը՝ «Խոստումի ժամանակից դեպի անապատային թափառումներ» թեմայով, որին մասնակցում էին ԵՀԽ անդամ Եկեղեցիների և էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը ներկայացնում էր Գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը:

Մայիսի 19-ին ժողովականներն այցելեցին Ժնևում գտնվող ԵՀԽ կենտրոնական գրասենյակ, ուր հանդիպեցին ԵՀԽ Գլխավոր Քարտուղար դոկ. Սամուել Կոբիայի և Նոբելյան մրցանակակիր, Անգլիկան արքեպիսկոպոս Դեսմունդ Տուտուի հետ: Ժողովի ընթացքում մասնակիցները քննարկումների և ելույթների միջոցով ներկայացրեցին անդամ Եկեղեցիներում տեղի ունեցող ձեռքբերումներն ու էկումենիկ հարաբերություններում առկա մարտահրավերները: Անդրադարձան «Էկումենիզմը 21-րդ դարում» թեմային և լսեցին ԵՀԽ 60-ամյակի առիթով երիտասարդ երկու աստվածաբանների պատրաստած դասախոսությունները:

Ժողովականները հանդիպեցին նաև ԵՀԽ ծրագրերի տնօրեններին և ծանոթացան միջկրոնական երկխոսության, բռնությունը և աղքատությունը հաղթահարելու, կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում իրականացվող ծրագրերին և կատարվող աշխատանքներին: Առանձին քննարկումներ տեղի ունեցան «Հավատք և Կարգ», ինչպես նաև «Առաքելություն և Ավետարանում» հանձնախմբերի ղեկավարների հետ:

Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը հանդիպեց ԵՀԽ գլխավոր քարտուղար դոկ. Սամուել Կոբիայի և ԵԵԿ գլխավոր քարտուղար Վեր. Քոլին Վիլյամսի հետ: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Վրաստանի կրոնական կյանքին և մասնավորապես Վիրահայոց թեմի կարգավիճակին ու հայկական եկեղեցիների հետ կապված խնդիրներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ